«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Ուսումնական պարապմունքներին ներկայացվող պահանջները կրթահամալիրի ավագ դպրոցում

1. Խմբային ուսուցումը կազմակերպվում է դասերի, ակումբային պարապմունքների, ուսումնական նախագծերի, ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունների, մասնագիտական փորձառությունների, ճամբարների, ստեղծագործական հավաքների, համերգների, ցուցահանդեսների, ներկայացումների (ուսումնական պարապմունքներ) ձևով:

Դաս է համարվում կրթահամալիրի ավագ դպրոցների ուսումնական պլաններով որոշված ընդհանուր և սովորողի ընտրությամբ դասընթացների ուսուցման կազմակերպման ժամանակային միավորը (45 կամ 40 րոպե, ֆիզկուլտուրայի դեպքում՝ 60 րոպե): Դասի բովանդակային և կազմակերպչական պատասխանատուն դասավանդողն է: Սովորողի մասնակցությունը դասին պարտադիր է:

Դասից առաջ. Դասավանդողը դասին ներկայանում է նախապատրաստված՝ ունենում է դասի ծրագրի, դասի ընթացքում օգտագործվող նյութերի էլեկտրոնային տարբերակը: Անհրաժեշտության դեպքում համապատասխան նյութերը ուղարկում է սովորողներին: Դասավանդողը պատրաստ է լինում տվյալ դասի՝ առանց SS իջոցների կազմակերպմանը (արտակարգ իրավիճակների դեպքում. Օրինակ՝ մասնաճյուղում էլեկտրականության բացակայության դեպքում):

Դասի ընթացքում. Դասը կազմակերպվում է SS միջոցների կիրառմամբ (արտակարգ դեպքերում՝ առանց դրանց): Դասավանդողը էլեկտրոնային մատյանում կատարում է սովորողների հաշվառում՝ նշելով նաև ուշացումները: Արտակարգ իրավիճակի դեպքում սովորողների հաշվառումը կատարում է դասից հետո՝ մինչև ժամը 17:00: Փորձում է իրականացնել դասի իր ծրագիրը:

Դասից հետո. Վեր է լուծում անցկացրած դասը՝ նշելով հաջողությունները և թերությունները: Մեկ օրվա ընթացքում կատարում է դասի ծրագրի խմբագրում և տեղադրում իր բլոգում կամ Skay Drive- ում և հղումը տեղադրում ավագ դպրոցի կայքի «Ուսումնական նյութեր» բաժնի «Շաբաթական ուսումնական նյութեր» ենթաբաժնում:

Ակումբային պարապմունքը տվյալ ակումբի աշխատակարգով որոշված պարապմունքի ժամանակահատվածն է (45-90 րոպե): Ակումբային պարապմունքի բովանդակային և կամակերպական պատասխանատուն տվյալ պարապմունքի դասավանդողն է: Դասավանդողը կատարում է պարապմունքի մասնակիցների հաշվառում: Սովորողի

մասնակցությունը ակումբի իր պարապմունքին պարտադիր է: Ակումբի պարապմունքի ծրագիրը մեկ օր առաջ տեղադրվում է mskh.am կայքի տվյալ ակումբի ենթաբաժնում: Պարապմունքից հետո մեկ օրվա ընթացքում պարապմունքի դասավանդողը է mskh.am կայքի տվյալ ակումբի ենթաբաժնում տեղադրում է պարապմունքի հաշվետվությունը, նշելով կարևոր ձեռքբերումները:

Ուսումնական նախագիծը սովորողների որևէ խմբի կողմից իրականացվող աշխատանք է, որի բովանդակությունը ընդգրկված չէ ավագ դպրոցների ուսումնական պլաններով որոշված դասընթացների, ակումբերի ծարգրերում: Ուսումնական նախագիծը կարող է ունենալ մանկավարժ ղեկավար: Ուսումնական նախագծի բովանդակությունը, կատարման ժամանակացույցը կրթական ծրագրի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը: Ժամանակացույցը ընդգրկում է միջանկյալ հաշվետվությունները: Ուսումնական նախագիծը տեղադրվում է համապատասխան դպրոցի կայքի «Ուսումնական նախագծեր» ենթակայքում: Ուսումնական նախագծի իրականացումը՝ ըստ հաստատված ժամանակցույցի վերահսկում է համապատասխան դպրոցի ղեկավարը: Ժամանակացույցի համաձայն կատարված աշխատանքների միջանկյալ հաշվետվությունները տեղադրվում են համապատասխան դպրոցի կայքի «Ուսումնական նախագծեր» ենթակայքում: Նախագծի ավարտից հետո կատարված աշխատանքի արդյուքը տեղադրվում է համապատասխան դպրոցի կայքի «Ուսումնական նախագծեր» ենթակայքում: mskh.am կայքի առաջին էջում տեղադրվում է նախագծի սեղմ հաշվետվություն, որը պարունակում է նաև ընդհանուր հաշվետվության հղումը:

Ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունը որոշվում է ավագ դպրոցների ուսումնական պլաններով որոշված դասընթացների և ակումբենրի ծրագերով (պարտադիր ճամփորդություններ): Հաշվառվում է յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը ճամփորդությանը: Ուսումնական-հայրենագիտական ճամփորդություն կարող է կազմակերպել կրթահամալիրի մանկավարժական աշխատողը: Ճամփորդություն թույլատրվում է և ճամփորդության ղեկավարը նշանակվում է կրթահամալիրի տնօրենի հրամանով՝ համապատասխան դպրոցի ղեկավարի կամ ճամփորդություն կազմակերպող մանկավարժի ներկայացմամբ: Ճամփորդության ծրագրի իրականացման և անվտանգության պատասխանատուն ճամփորդության ղեկավարն է: Ճամփորդության ծրագիրը, մասնակիցների ցուցակը ճամփորդությունից երկու օր առաջ տեղադրվում է համապատասխան դպրոցի կայքի «Ուսումնական-հայրենագիտական ճամփորդություններ» բաժնում: Ճամփորդության ընթացքում և դրանից հետո ճամփորդության մասնակից սովորողները համապատասխան դպրոցի կայքում նյութեր են տեղադրում ճամփորդության մասին: Ճամփրդության ավարտից հետո ճամփորդության ղեկավարը երեք օրվա ընթացքում հաշվետվություն է տեղադրում համապատասխանա դպրոցի «Ուսումնական-հայրենագիտական ճամփորդություններ» բաժնում: